ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
Ա.ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ Է ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ-ԳՆԴԱՊԵՏ ՄԻՔԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ Է ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՄԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԻՆ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 15-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Բանակի օրվա և Հայոց բանակի 15-րդ տարեդարձի առիթով, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայոց Եկեղեցու հայաստանյան թեմերի առաջնորդները, ՀՀ բանակի բարձրագույն սպայական կազմը՝ գլխավորությամբ ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի, զինվորներ և բարեպաշտ հավատացյալներ:

Հընթացս Սուրբ Պատարագի կատարվեց Հանրապետական մաղթանք՝ Հայաստանի Հանրապետության անսասանության ու պայծառության և Հայոց բանակի առավել զորացման համար:

Մասնավոր այս աղոթքի արարողությունից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Գերաշնորհ Արարատ Սրբազանը՝ մասնավորապես նշելով. «Հետադարձ հայացք նետենք և շուրջ քսան տարիներ հետ գնալով՝ փորձենք այդ պահի մեջ մտածել մի բանակի մասին, որ պիտի կոչվեր Հայկական բանակ: Մեզ առնվազն կանվանեին խենթեր և երազապաշտներ...: Այսօր, սակայն, այդ «խենթերը» ցնծում են և ուրախանում, որովհետև ստեղծվեց Հայոց բանակը, ծնունդ առավ տասնհինգ տարիներ առաջ և իր մանուկ հասակից իսկ վաստակեց այնպիսի հերոսական համբավ, որ ճշմարտացիորեն այն կարելի է անվանել «Ռաֆֆու խենթերի բանակ» (տե՛ս էջ 28):

Հավարտ Սուրբ Պատարագի Հայոց բանակի բոլոր հրամանատարներին ու զինվորներին հայրապետական իր օրհնությունն ու շնորհավորանքը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մաղթելով, որ նրանք առավել զորանան և կարողանան իրենց ծառայությունը փառքով ու պատվով կատարել Հայրենիքի ու մեր ժողովրդի նկատմամբ: Այս առիթով Վեհափառ Հայրապետը նաև կոչ արեց բարեպաշտ հայորդիներին իրենց աղոթքը հանապազ առ Աստված բարձրացնելու՝ հայցելով Հայոց երկրին խաղաղություն, բանակին՝ զորություն ու ամրություն, և համայն հայ ժողովրդին՝ Աստծո անսպառ օրհնություն:

Ս. Պատարագից հետո Հայրապետական թափորը և բանակի սպայական կազմը ուղղվեցին դեպի Վեհարան, ուր տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն: Ընդունելության ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ շնորհեց ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ գեներալ-գնդապետ Միքայել Հարությունյանին և ԼՂՀ Պաշտպանության նախարար գեներալ-լեյտենանտ Մեյրան Օհանյանին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ